Ինչպես հիշյալ հրովարտակները, այնպես էլ այլ աղբյուրներ վկայում են քրիստոնյա համայնքների, հատկապես հայ աշխարհիկ և հոգևորական վերնախավի հանդեպ շահ Իսմայիլի վարած մեղմ քաղաքականության մասին։ Առանձնապես ընդգծված է նրա սիրաշահող վերաբերմունքը Էջմիածնի Զաքարիա կաթողիկոսի նկատմամբ[9]։

Դա, ինչպես իրավացի կերպով նշել է Ի. Պ. Պետրուշևսկին, հիմնականում թելադրված էր շահ Իսմայիլի վարած արտաքին քաղաքականությամբ, որով նա ձգտում էր ընդդեմ Թուրքիայի դաշնակիցներ գտնել եվրոպական քրիստոնյա պետությունների շարքում։ Այդ նպատակով նա փորձում էր օգտագործել նաև հայ վաճառականությանը[10]։

Արարատյան երկրում իշխող կըզըլբաշ ամիրների մասին հետագա տեղեկությունները հիմք են տալիս ենթադրելու, որ Զալդրանի ճակատամարտից և 1515 թ. հաշտության պայմանագրից հետո, երբ Անդրկովկասն ու Արարատյան երկիրը կըզըլբաշները վերագրավեցին, շահ Իսմայիլը Զուխուր-Սա'դի վիլայեթը խոշոր ավատի կամ օլքայի իրավունքով տվել է Ռումլու մեծ ցեղի ամիրներին։

1517 թ. դեպքերը նկարագրելիս, Հասան-բեկ Ռումլուն հիշատակում է, որ այդ թվականին Դիվ-սուլթան Ռումլուն ասպատակում և կողոպտում է Վրաստանի արևմտյան շրջանները և վերադառնում Զուխուր-Սա'դ[11], որը հավանաբար նրա նստավայրն էր։

Կան նաև տեղեկություններ Երևանում Դիվ-սուլթանի կատարած շինարարական աշխատանքների մասին։ Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենը թվարկելով Երևանի նշանավոր կառույցները, հայոց առաջնորդարանից ոչ շատ հեռու նկարագրում է մի ավերակ մզկիթ և նշում, որ այն «իր հիմնադրի անունով կոչվում էր Դիվ-սուլթանի մզկիթ»[12]։

Դիվ-սուլթան Ռումլուն շահ Իսմայիլի օրոք, նրա որդու՝ Թահմասպ միրզայի, դաստիարակն էր, իսկ 1524 թ. հետո, երբ Թահմասպը 11 տարեկան հասակում հոջորդեց հորը, ստանձնել էր պետության «վեքիլի» կամ խնամակալի պաշտոնը[13]։

Որպես նորընծա շահի խնամակալ, Դիվ-սուլթանը մեծ ազդեցություն ուներ և կարևոր տեղ էր գրավում կըզըլբաշների ռազմա-ֆեոդալական հիերարխիայում։ Սակայն ինչպես վկայում են Հասան-բեկ Ռումլուն և Իսքանդար Մունշին, խնամակալի պաշտոնը շուտով կռվախնձոր է դառնում նրա և Քյո-

---

[9] Raphael du Mans, Estat de la Perse en 1660, Paris, 1890, էջ 274—275։

[10] И. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII веках («Сборник статьей по истории Азербайджана», Баку, 1949, стр. 239).

[11] A chronicle of the early Safawis being the Ahsanu'ttawarikh of Hasan-Rumlu, vol. I (Persian text), Baroda, 1931, էջ 167 (այսուհետև՝ Հասան-բեկ Ռումլու)։

[12] J. Chardin, Voyages du Chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, Paris, 1811, t. II, էջ 164։ Շարդենի նկարագրությունից դժվար չէ կռահել, որ մզկիթը եղել է ներկայիս «Գյոգ մեջիդի» կամ «Հուսեյն-Ալի խանի մզկիթի» տեղում, որտեղ այժմ տեղավորված է Երևան քաղաքի պատմության թանգարանը։ Դիվ-սուլթանի մզկիթը հավանաբար լիովին ավերվել է 1679 թ. մեծ երկրաշարժի ժամանակ, իսկ նրա տեղում 1766 թ. Երևանի Հուսեյն-Ալի խանը (1762—1783) կառուցել է նոր մզկիթ, որն իր անունով կոչվում էր «Հուսեյն-Ալի խանի մզկիթ»։

[13] Իսքանդար Մունշի, հ. I, էջ 47—48։